

Խմբագրված է՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան»
հիմնադրամի գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 20-ի նիստում
Գիտական խորհրդի նախագահ՝ _____ Ե. Սերոբյան

Լրամշակված է՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան»
հիմնադրամի գիտական խորհրդի 2022 թ.-ի մայիսի 24-ի նիստում
Գիտական խորհրդի նախագահ՝ _____ Ե. Սերոբյան

Լրամշակված է՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան»
հիմնադրամի գիտական խորհրդի 2021 թ.-ի դեկտեմբերի 6-ի նիստում
Գիտական խորհրդի նախագահ՝ _____ Ե. Սերոբյան

Լրամշակված է՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան»
հիմնադրամի գիտական խորհրդի 2019 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում
Գիտական խորհրդի նախագահ՝ _____ Ե. Սերոբյան

Լրամշակված է՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան»
հիմնադրամի գիտական խորհրդի 2018 թ.-ի նոյեմբերի 2-ի նիստում
Գիտական խորհրդի նախագահ՝ _____ Ե. Սերոբյան

Լրամշակված է՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան»
հիմնադրամի գիտական խորհրդի 2017 թ.-ի դեկտեմբերի 4-ի նիստում
Գիտական խորհրդի նախագահ՝ _____ Ե. Սերոբյան

Լրամշակված է՝ «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական
ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի
2016 թ.-ի նոյեմբերի 15-ի նիստում
Գիտական խորհրդի նախագահ՝ _____ Ս. Մինասյան

Հիմք՝ «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ»
ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի 2016 թ.-ի հուլիսի 11-ի նիստում հաստատված ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի
գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգ
Գիտական խորհրդի նախագահ՝ _____ Վ. Գրիգորյան

ԿԱՐԳ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ (նոր խմբագրությամբ)

1. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում (այսուհետ՝ Համալսարան) գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում են աշխատակիցների և ուսանողների կողմից իրականացվող գիտական (գիտամեթոդական) գործունեության համար Համալսարանի միջոցներից պայմանագրային թեմատիկ ֆինանսավորվող դրամաշնորհի (այսուհետ՝ Դրամաշնորհ) տրամադրման և այդ նպատակով մրցույթի անցկացման սկզբունքները և ընթացակարգը: (Լրամշակված՝ գիտական խորհրդի 2019 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում)
2. Դրամաշնորհը Համալսարանի գիտական գործունեության ներքին ֆինանսավորման ձևերից է և միտված է Համալսարանի աշխատակիցների և ուսանողական համակազմի գիտական գործունեության հետագա զարգացմանը, ուսումնական գործընթացում

հետազոտական աշխատանքների արդյունքների ներդրմանը, Համալսարանի զարգացմանն ու գործընթացների բարելավմանը: **(Լրամշակված՝ գիտական խորհրդի 2017 թ.-ի դեկտեմբերի 4-ի նիստում) (Լրամշակված՝ գիտական խորհրդի 2019 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում)**

3. Դրամաշնորհը կտրամադրվի Համալսարանի բոլոր մասնագիտությունների հետ սերտ առնչվող հիմնարար և կիրառական գիտական հետազոտություն իրականացնելու համար 3-4 անձից կազմված հետազոտական (գիտական թեմայի) խմբերի (այսուհետ՝ Խումբ) նախաձեռնությամբ ներկայացված և մրցութային կարգով ընտրված մինչև 3 գիտական թեմաներին (նախագծերին)՝ 12 կամ 24 ամիս ժամկետով՝ առավելագույնը համապատասխանաբար 4.8 և 9.6 միլիոն ՀՀ դրամ: Մասնավորապես, թեմայի 12-ամսյա ֆինանսավորման առավելագույն ծավալը չպետք է գերազանցի.

- 4 անձի համար- 4.800.000 ՀՀ դրամը
- 3 անձի համար-3.600.000 ՀՀ դրամը

Այդ թվում աշխատանքի վարձատրության 12-ամսյա ֆինանսավորման առավելագույն ծավալը չպետք է գերազանցի.

- 4 անձի համար- 4.320.000 ՀՀ դրամը
- 3 անձի համար-3.240.000 ՀՀ դրամը

Թեմայի 24-ամսյա ֆինանսավորման առավելագույն ծավալը չպետք է գերազանցի.

- 4 անձի համար- 9.600.000 ՀՀ դրամը
- 3 անձի համար-7.200.000 ՀՀ դրամը

Այդ թվում աշխատանքի վարձատրության 24-ամսյա ֆինանսավորման առավելագույն ծավալը չպետք է գերազանցի.

- 4 անձի համար- 8.640.000 ՀՀ դրամը
- 3 անձի համար-6.480.000 ՀՀ դրամը

(Լրամշակված՝ գիտական խորհրդի 2017 թ.-ի դեկտեմբերի 4-ի նիստում):

4. Դրամաշնորհի տրամադրման մրցույթի հայտարարությունը կտրվի յուրաքանչյուր տարվա դեկտեմբեր ամսվա ընթացքում: Հայտերի ընդունման ժամկետը սահմանել 30 աշխատանքային օր: Մրցույթի արդյունքում երաշխավորված թեմաների ֆինանսավորման մեկնարկը կտրվի հաջորդ տարվա II եռամսյակի ընթացքում: **(Լրամշակված՝ գիտական խորհրդի 2017 թ.-ի դեկտեմբերի 4-ի նիստում) (Լրամշակված՝ գիտական խորհրդի 2019 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում) (Լրամշակված՝ գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 20-ի նիստում)**

5. Խմբի ղեկավար կարող է լինել Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի գիտական աստիճան ունեցող ներկայացուցիչը, ով ՇՊՀ-ում ունի առնվազն երեք տարվա գիտամանկավարժական աշխատանքային փորձ և վերջին երեք տարիների ընթացքում առնվազն 3 աշխատանք (Impact Factor-ով օժտված, Scopus, Web of Science շտեմարաններում, PIIHII համակարգում, ՌԴ ԲՈՀ-ի և/կամ ՀՀ ԿԳՄՄ ԲՈԿ-ի կողմից ընդունելի պարբերականների ցանկում ընդգրկված գիտական/գիտամեթոդական հոդված, բուհի գիտական խորհրդի երաշխավորմամբ գիտամեթոդական/ ուսումնագիտական աշխատանք, մենագրություն), կամ 2 աշխատանք և մտավոր սեփականության գործակալության կողմից տրված երկու արտոնագիր, կամ մեկ աշխատանք և չորս արտոնագիր: **(Լրամշակված՝ գիտական խորհրդի 2019 թ.-ի**

դեկտեմբերի 26-ի նիստում), (Լրամշակված՝ գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 20-ի նիստում)

6. Խմբում որպես կատարող կարող են ընդգրկվել Համալսարանի աշխատակիցները: (Լրամշակված՝ գիտական խորհրդի 2017 թ.-ի դեկտեմբերի 4-ի նիստում), (Լրամշակված՝ գիտական խորհրդի 2018թ.-ի նոյեմբերի 2 -ի նիստում)
7. Խմբում որպես կատարող պետք է ընդգրկվի ՇՊՀ-ի բարձր առաջադիմություն ունեցող, ուսումնառելու նվազագույնը 1 տարի ունեցող բակալավրի, մագիստրատուրայի կամ հետազոտողի կրթական աստիճանի (մինչև 35 տարեկան) առնվազն 1 ուսանող: (Լրամշակված՝ գիտական խորհրդի 2019 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում), (Լրամշակված՝ գիտական խորհրդի 2021 թ.-ի դեկտեմբերի 6-ի նիստում)
8. Խմբում որպես խորհրդատու կարող է ընդգրկվել իրականացվող թեմայի ոլորտին առնչվող, գիտական աստիճան ունեցող անձ: (Լրամշակված՝ գիտական խորհրդի 2017 թ.-ի դեկտեմբերի 4 -ի նիստում), (Լրամշակված՝ գիտական խորհրդի 2019 թ.-ի դեկտեմբերի 26 -ի նիստում)
9. Պահպանելով Խմբի անդամների նախապես ամրագրված ընդհանուր քանակը՝ թույլատրվում է Հայտում որպես կատարող կամ խորհրդատու տարբեր ժամանակահատվածների համար ներգրավել տարբեր անձանց, ովքեր այդ ժամանակահատվածում ներգրավված չեն սույն կարգի շրջանակներում իրականացվող այլ դրամաշնորհային ծրագրում/հայտում: (Խմբագրված՝ գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 20-ի նիստում)
10. Թեմայի իրականացման ընթացքում հնարավոր է Խմբի կատարողների և խորհրդատուի փոփոխություն (ոչ ուսանող կատարողի և խորհրդատուի դեպքում՝ համարժեք)՝ Խմբի ղեկավարի համապատասխան հիմնավորումներով զեկուցագրի հիման վրա: Ընդ որում՝ տվյալ անձինք այդ ժամանակահատվածում ներգրավված չեն սույն կարգի շրջանակներում իրականացվող այլ դրամաշնորհային ծրագրում/հայտում: (Խմբագրված՝ գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 20-ի նիստում)
11. Մրցույթին չեն կարող մասնակցել Համալսարանի կողմից ֆինանսավորվող թեմաներ իրականացնող ղեկավարները, կատարողները և խորհրդատուները, եթե այդ թեմաները չեն ավարտվում մինչև հայտարարված մրցույթի արդյունքում երաշխավորված թեմաների ֆինանսավորման ֆինանսական տարում, բացառությամբ 9-րդ կետով նախատեսված դեպքերի: (Լրամշակված՝ գիտական խորհրդի 2017 թ.-ի դեկտեմբերի 4 -ի նիստում), (Լրամշակված՝ գիտական խորհրդի 2019 թ.-ի դեկտեմբերի 26 -ի նիստում), (Լրամշակված՝ գիտական խորհրդի 2021 թ.-ի դեկտեմբերի 6-ի նիստում)
12. Խմբի ղեկավարը և կատարողները չեն կարող ընդգրկվել մրցույթին ներկայացված մեկից ավելի հայտերում (այսուհետ՝ Հայտ(եր))): (Լրամշակված՝ գիտական խորհրդի 2019 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում)
13. Հայտը (Հավելված 1) էլեկտրոնային և տպագիր 2 օրինակով Խմբի ղեկավարի կողմից ներկայացվում է Համալսարանի Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոն սահմանված ժամկետում՝ Հավելված 1-ի պահանջներին համապատասխան: (Լրամշակված՝ գիտական խորհրդի 2017թ.-ի դեկտեմբերի 4 -ի նիստում), (Լրամշակված՝ գիտական խորհրդի 2019 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում)
14. Հայտին կցվում են ամբիոնի նիստի, ֆակուլտետի խորհրդի դրական կամ բացասական

- եզրակացությունները, Խմբի ղեկավարի դիմումը (Հավելված 2) և Խմբի անդամի ուսանող հանդիսանալու մասին տեղեկանքը:
15. Հայտն անհրաժեշտ է կազմել հայերեն A4 ձևաչափի թղթի վրա, 1.5 միջտողային հեռավորությամբ, 12 չափի «Unicode Sylfaen» տառատեսակով՝ պահպանելով աղյուսակների ամբողջականությունը: Էջերի բոլոր կողմերից պետք է թողնել 2.5 սմ լուսանցք և հաջորդաբար համարակալել ներքևի աջ անկյունում: Հայտը պետք է ներկայացնել «Microsoft Word» ձևաչափով՝ տպված և էլեկտրոնային տարբերակներով:
 16. Ծախսերի նախահաշիվը կազմելիս պետք է օգտվել Հայտի ծախսերի նախահաշվի ներկայացման նորմացույցներից՝ ըստ սույն կարգի կետ 3-ի: (**Լրամշակված՝ գիտական խորհրդի 2019 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում**)
 17. Խմբի ղեկավարը պաշտոնապես ներկայացնում է Խումբը՝ հանդես գալով վերջինիս անունից:
 18. Մրցույթին ներկայացնելով հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող Հայտ և այնուհետ գիտական թեմայի իրականացման մասին հաշվետվություն (այսուհետ՝ Հաշվետվություն)՝ Խմբի ղեկավարը պետք է գործի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթներին համապատասխան: Եթե հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատերը համարում է, որ իր իրավունքները խախտվել են, ապա դրանք պաշտպանելու նպատակով կարող է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել դատարան:
 19. Թեմայի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները պետք է հրապարակվեն. 24-ամսյա ֆինանսավորման դեպքում՝ առնվազն 8, 12-ամսյա ֆինանսավորման դեպքում՝ առնվազն 4 գիտական, գիտամեթոդական հոդվածներում, որոնք տպագրված կլինեն Impact Factor-ով օժտված, Scopus, Web of Science շտեմարաններում, PIIHL համակարգում, ՌԴ ԲՈՂ-ի և/կամ ՀՀ ԿԳՄՍ ԲՈԿ-ի կողմից ընդունելի պարբերականների ցանկում ընդգրկված գիտական հրատարակություններում, իսկ գիտամեթոդական/ուսումնագիտական աշխատանքները (նախատեսված նաև ուսանողների համար), մենագրությունները՝ բուհի գիտական խորհրդի որոշմամբ: Մենագրության կամ գիտամեթոդական/ուսումնագիտական աշխատանքների դեպքում 4 տպագրական մամուլը համարել համարժեք 1 գիտական հոդվածի, իսկ ուսումնամեթոդական/ուսումնագիտական/գիտամեթոդական ձեռնարկների դեպքում 6 տպագրական մամուլը՝ 1 գիտամեթոդական հոդվածի: Հետազոտությունների արդյունքները հրապարակելիս անհրաժեշտ է նշել ՇՊՀ-ի կողմից ստացված աջակցության մասին՝ նշելով գիտական թեմայի ծածկագիրը. Հետազոտությունն իրականացվել է ՇՊՀ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № ShSU____գիտական թեմայի շրջանակներում: (**Լրամշակված՝ գիտական խորհրդի 2019 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում**), (**Լրամշակված՝ գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 20-ի նիստում**)
 20. Պարտադիր է Հայտի և Հաշվետվությունների հակիրճ նկարագրության էլեկտրոնային տարբերակների հրապարակումը ՇՊՀ-ի պաշտոնական կայքէջում:
 21. Մրցույթի կազմակերպման և անցկացման նպատակով ռեկտորի հրամանով ձևավորվում

է ՇՊՀ-ի ներքուհական խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ)՝ 5-7 անձից, որն ուսումնասիրում է Հայտերը: Հայտերը 5 աշխատանքային օրվա ընթացքում անցնում են տեխնիկական ստուգում և նախնական ընտրության փուլ:

22. Տեխնիկական ստուգման արդյունքում Հայտը հետ է վերադարձվում, եթե այն.

- լրացված է ոչ ճիշտ կամ ոչ ամբողջությամբ,
- ամբողջությամբ կամ մասամբ կրկնում է նախկինում իրականացված կամ ներկայումս իրականացվող որևէ ծրագիր և այլն: **(Լրամշակված՝ գիտական խորհրդի 2017թ.-ի դեկտեմբերի 4-ի նիստում), (Լրամշակված՝ գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 20-ի նիստում)**

23. Տեխնիկական ստուգում և նախնական ընտրություն անցած Հայտերն առավելագույնը 2 ամսվա ընթացքում ենթարկվում են փորձաքննության: Փորձաքննության ժամանակ գնահատվում են (Հավելված 3) Հայտի գիտական նորույթն ու արդիականությունը, Խմբի ղեկավարի և կատարողների գիտական ձեռքբերումները տվյալ բնագավառում, նրանց մասնագիտական որակավորումը, գիտական թեմայի իրականացման նախադրյալները, փուլերը և ժամկետները, նախահաշվի հիմնավորվածությունը, ուսումնական գործընթացում ներդրումը կամ առևտրայնացման հեռանկարը, ինչպես նաև գիտության տվյալ բնագավառի առանձնահատկություններից բխող այլ հանգամանքներ:

24. Խորհուրդը սահմանում է Հայտերի համար անցումային շեմը (80 միավորից ոչ ցածր, վերջնականորեն քննարկում է Հայտերը և դրանց փորձաքննական գնահատականների նվազման կարգով ձևավորում է վարկանիշային ցանկը: Նախնական կերպով որոշվում են ֆինանսավորման ենթակա Հայտերը: **(Լրամշակված՝ գիտական խորհրդի 2017 թ.-ի դեկտեմբերի 4-ի նիստում), (Լրամշակված՝ գիտական խորհրդի 2019 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում)**

25. Արտաքին փորձագետ(ներ)ի գնահատական(ներ)ը կազմում է(են) գնահատման սանդղակի առավելագույն միավորի 85%-ը, իսկ Խորհրդի գնահատականը՝ 15%-ը: Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը փորձագետի գնահատականի կամ փորձագիտական գնահատականների միջին թվաբանականի և Խորհրդի գնահատականի գումարն է:

26. Համալսարանի մասնագիտության կրթական ծրագրերի բարելավմանը անհամապատասխանելու դեպքում Հայտի գիտական փորձաքննության գործում որոշիչ է Խորհրդի կարծիքը:

27. Խորհուրդը մրցույթի արդյունքների ամփոփումը ներկայացնում է Համալսարանի ռեկտորին:

28. Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրենը թեմաների անցումային շեմը և նախնական կերպով ֆինանսավորման ենթակա թեմաների ցանկը Հայտերի գիտական փորձաքննության վերջնական արդյունքների հետ (այդ թվում՝ հայտերի գրախոսման կարծիքները՝ առանց գրախոսող անձի և կազմակերպության տվյալների) տրամադրում է Խմբի ղեկավարներին: **(Լրամշակված՝ գիտական խորհրդի 2017 թ.-ի դեկտեմբերի 4-ի նիստում), (Լրամշակված՝ գիտական խորհրդի 2019 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում),**

(Լրամշակված՝ գիտական խորհրդի 2021 թ.-ի դեկտեմբերի 6-ի նիստում)

29. Մրցույթի արդյունքները 5 աշխատանքային օրվա ընթացքում կարող են բողոքարկվել Խմբի ղեկավարի կողմից՝ ռեկտորին ներկայացնելով գրավոր դիմում: **(Լրամշակված՝ գիտական խորհրդի 2022 թ.-ի մայիսի 24-ի նիստում)**
30. Բողոքարկման դեպքում ռեկտորի հանձնարարությամբ Խորհուրդը կազմակերպում է կրկնակի փորձաքննություն՝ ներգրավելով համապատասխան ոլորտի արտաքին փորձագետի:
31. Բողոքարկման արդյունքում Հայտի համար տրվում է վերջնական փորձագիտական եզրակացություն, որը որոշվում է բոլոր փորձագիտական գնահատականների միջին թվաբանականով: **(Լրամշակված՝ գիտական խորհրդի 2021 թ.-ի դեկտեմբերի 6-ի նիստում)**
32. Խորհուրդը բողոքարկման փուլի ավարտից հետո ֆինանսավորման է երաշխավորում մրցույթի արդյունքում հաղթած վերջնական թեմաները: Խորհրդի որոշումը վերջնական է **(Լրամշակված՝ գիտական խորհրդի 2017 թ.-ի դեկտեմբերի 4-ի նիստում)**:
33. Ֆինանսավորման երաշխավորված Հայտերը ներկայացվում են ռեկտորի հաստատմանը:
34. Թեմայի իրականացման ընթացքում Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոն է ներկայացվում ընթացիկ (6-ամսյա), իսկ ավարտից հետո՝ ամփոփիչ Հաշվետվություն՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում, որոնց վերաբերյալ ռեկտորի հրամանով ձևավորված փորձագիտական խորհուրդը տալիս է եզրակացություն: **(Լրամշակված՝ գիտական խորհրդի 2017 թ.-ի դեկտեմբերի 4-ի նիստում), (Լրամշակված՝ գիտական խորհրդի 2019 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում), (Լրամշակված՝ գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 20-ի նիստում)**
35. Թեմայի ֆինանսավորումը դադարեցվում է ընթացիկ (6-ամսյա) Հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու կամ Հաշվետվության վերաբերյալ փորձագիտական խորհրդի բացասական եզրակացության հիման վրա **(Լրամշակված՝ գիտական խորհրդի 2017 թ.-ի դեկտեմբերի 4-ի նիստում)**:
36. Համալսարանի ռեկտորի և ֆինանսավորման երաշխավորված Խմբի (գիտական թեմայի) ղեկավարի, կատարողների և խորհրդատուի միջև 7-օրյա ժամկետում կնքվում է համաձայնագիր, իսկ ուսանողի հետ՝ աշխատանքային պայմանագիր: **(Լրամշակված՝ գիտական խորհրդի 2019 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում)**
37. ՀՀ-ից երեք ամսից ավել բացակայելու դեպքում ղեկավարի (կատարողի) հետ կնքված պայմանագիրը լուծվում է: Ղեկավարի հետ կնքված պայմանագիրը լուծելու դեպքում թեմայի ֆինանսավորումը շարունակելու հարցը կքննարկվի առանձին: Կատարողի հետ կնքված պայմանագիրը լուծելու դեպքում թեմայի ղեկավարի միջնորդությամբ ու ռեկտորատի թույլտվությամբ կատարողների կազմում իրականացվում է համարժեք փոփոխություն **(Լրամշակված՝ գիտական խորհրդի 2017 թ.-ի դեկտեմբերի 4-ի նիստում)**:
38. Մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ցանկը ղեկավարների տվյալների հետ միասին տեղակայվում են Համալսարանի պաշտոնական կայքէջում՝ www.shsu.am:

ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐՏԱԲՅՈՒՋԵԻՑ
ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ
ՍՏԱՆԱԼՈՒ

ՀԱՅՏ

Հայտը հանձնված է « _____ » _____ 20 թ.

Ծածկագիր՝ _____

(լրացվում է ՇՊՀ-ի Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնում)

Տ Ի Տ Ղ Ո Ս Ա Թ Ե Ր Թ

1. Հայտի

- վերնագիրը (15 բառից ոչ ավելի)

- բնագավառը _____

- մասնագիտական թվանիշը _____

- բնույթը

տեսական

փորձարարական

- 2. Հուշող (բանալի) բառեր (10 բառից ոչ ավելի) _____

3. Հայտի ղեկավարի

- ազգանունը անունը հայրանունը _____

- ծննդյան թիվը _____

- գիտական աստիճանը _____

- պաշտոնը _____

- հեռախոսահամարը _____

- էլեկտրոնային հասցեն _____

- 4. Ֆակուլտետը _____

- 5. Ամբիոնը _____

- 6. Նախագծի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը _____

ամիս

- 7. Գիտահետազոտական խմբի (ներառյալ ղեկավարը) անդամների թիվը _____

- 8. Աշխատանքի վարձատրության (ներառյալ եկամտային հարկը) գումարը _____

հազար դրամ

- 9. Հայցվող ընդհանուր գումարը _____ հազար դրամ

- 10. Խմբի ղեկավարի ստորագրությունը _____

11. Ամբիոնի վարիչի ստորագրությունը _____

12. Ֆակուլտետի դեկանի ստորագրությունը _____

«____» _____ 20 թ.

COVER PAGE

1. Project Title _____

- Field of Science _____

- Type of Research:

Theoretical

Experimental

2. Key Words _____

3. Principle Investigator (Name, Surname) _____

4. Department _____

5. Chair _____

ТИТУЛЬНЫЙ ЛИСТ

1. Заголовок проекта _____

- Область _____

- Тип проекта:

Теоретический

Экспериментальный

2. Ключевые слова _____

3. Данные руководителя проекта (имя, фамилия) _____

4. Факультет _____

5. Кафедра _____

ՆԱԽԱԳԾԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ¹

¹ Ներկայացվում է հայերեն, անգլերեն և ռուսերեն՝ յուրաքանչյուրը 100-150 բառ:

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ²

² Ներկայացնել հայերեն, մինչև 12 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը.

1. Խնդրի դրվածքը, նրա արդիականությունը, թեմայի գիտական նպատակները, հետազոտության ծրագիրը, եռամսյակային փուլերը, առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները (մինչև 8 էջ),
2. Տվյալ ուղղությամբ Խմբի ունեցած ձեռքբերումները և ակնկալվող արդյունքները (մինչև 2 էջ),
3. Ուսումնական գործընթացում հետազոտության արդյունքների ներդրում (**Լրամշակված՝ գիտական խորհրդի 2017 թ.-ի դեկտեմբերի 4-ի նիստում**),
4. Օգտագործված գրականության ցանկը:

ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Ազգանուն, անուն, հայրանուն (հայերեն)	
Ազգանուն, անուն, հայրանուն (անգլերեն)	
Ազգանուն, անուն, հայրանուն (ռուսերեն)	
Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը	
Կրթությունը (բուհ, մասնագիտություն)	
Գիտական աստիճանը	
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվն ու վայրը	
Հրատարակված - գիտական հոդվածների թիվը - մենագրությունների թիվը	
Արտոնագրերի թիվը	
Լիցենզիաների թիվը	
Նախագծի հետ առնչվող վերջին 5 տարում հրատարակված գիտական հոդվածները (նշել հեղինակներին, վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը)	
1.	
2.	
Մտավոր սեփականության գործակալության կողմից տրված արտոնագրեր	
1.	
2.	
Նախկինում ստացված դրամաշնորհները	

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ն Ա Խ Ա Գ Ծ Ի Յ Ո Ի Ր Ա Ք Ա Ն Չ Յ Ո Ի Ր
Կ Ա Տ Ա Ր Ո Ղ Ի/Խ Ո Ր Հ Ր Դ Ա Տ Ո Ւ Ի Մ Ա Ս Ի Ն

Ազգանուն, անուն, հայրանուն (հայերեն)	
Ազգանուն, անուն, հայրանուն (անգլերեն)	
Ազգանուն, անուն, հայրանուն (ռուսերեն)	
Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը	
Կրթությունը (բուհ, մասնագիտություն)	
Գիտական աստիճանը	
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվն ու վայրը	
Աշխատանքի վայրը, պաշտոնը	
Հեռախոսահամարը /աշխատանքային, բնակարանային, բջջային/	
Էլեկտրոնային հասցե	
Նախագծի հետ առնչվող հրատարակված գիտական հոդվածները (նշել հեղինակներին, վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը)	
1.	
2.	

ՀԱՅՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հայտի ծածկագիրը _____

(լրացվում է ՇՊՀ-ի Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնում)

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆ (ներառյալ եկամտային հարկը)						
ազգանուն անուն հայրանուն	ՏԱՐԻ			ՏԱՐԻ		
	Անսական (հազար դրամ)	ամիսների քանակը	պահանջ վերցնողը (հազար դրամ)	Անսական (հազար դրամ)	ամիսների քանակը	պահանջ վերցնողը (հազար դրամ)
1)						
2)						
3)						
4)						
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ						
ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այդ թվում						
1. ՍԱՐՔԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ (հիմնավորել նախահաշվի մեկնաբանության մեջ)				ՏԱՐԻ	ՏԱՐԻ	
1)						
2)						
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ						
2. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ (հիմնավորել նախահաշվի մեկնաբանության մեջ)				ՏԱՐԻ	ՏԱՐԻ	
1) տեղական գործուղումների տրանսպորտային ծախսեր						
2) տեղական գործուղումների օրապահիկ						
3) տեղական գործուղումների զիջերավարձ						
4) օտարերկրյա գործուղումների տրանսպորտային ծախսեր						
5) օտարերկրյա գործուղումների օրապահիկ						
6) օտարերկրյա գործուղումների զիջերավարձ						
7) գործուղումների հետ կապված այլ ծախսեր (վիզա կամ այլ վճարումներ)						
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ						
ՀԱՅՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ						

Խմբի ղեկավար՝ _____

(ստորագրություն)

(ազգանուն, անուն, հայրանուն)

ՇՊՀ-ի գլխավոր հաշվապահ՝ _____

(ստորագրություն)

(ազգանուն, անուն, հայրանուն)

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՄԵՎՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ³

³ Հիմնավորել նախահաշվի 100 000 դրամը գերազանցող բոլոր ծախսերը:

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի
ռեկտոր _____

Քաղաքացի _____

Անուն, ազգանուն, հայրանուն

Հասցե

Հեռախոս

Դիմում

Խնդրում եմ ընդունել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման մրցույթի մասնակցության

«_____» վերնագրով
հայտը:

Դիմող՝ _____
Ստորագրություն

Անուն, ազգանուն

«_____» _____ 20 թ.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Հարցաշարի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է թվային գնահատականով, առավելագույնը 5 միավոր (0,5 միավորի ճշտությամբ)՝ հետևյալ սկզբունքով.

Գերազանց: Պատասխանը լիովին համապատասխանում է առաջադրված պահանջներին և թերություններն աննշան են:	5 միավոր
Շատ լավ: Հարցի պատասխանն առաջադրված պահանջներին համապատասխանում է որոշակի վերապահումներով:	4 միավոր
Լավ: Պատասխանն ընդհանուր առմամբ բավարարում է առաջադրված պահանջներին, թեև կան նաև զգալի թվով անհամապատասխանություններ, որոնք սակայն շտկելի են:	3 միավոր
Միջին: Հարցի պատասխանը բավարար չէ դրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար:	2 միավոր
Վատ: Պատասխանը ներկայացված է մակերեսորեն և խիստ անորոշ:	1 միավոր
Շատ վատ: Հարցի պատասխանը բացակայում է կամ այն չի կարող որոշվել տեղեկատվության բացակայության պատճառով:	0 միավոր

Հարցաշար

1	Նպատակներ: Որքանո՞վ են արժեքավոր հետազոտության նպատակները:	
2	Արդիականություն: Որքանո՞վ է արդիական առաջարկվող հետազոտությունը:	
3	Նորույթ: Որքանո՞վ է նոր ու հեռանկարային առաջարկվող հետազոտությունը:	
4	Իրագործելիություն: Որքանո՞վ է իրատեսական առաջարկվող ժամանակահատվածում հետազոտության նպատակներին հասնելը:	
5	Նախագիծ: Որքա՞ն հստակ է ձևակերպված նախագիծը:	
6	Համապատասխանություն: Որքանո՞վ է նախագիծը համապատասխանում հետազոտության նպատակների ձեռքբերմանը:	
7	Իրականացում: Որքանո՞վ է իրատեսական նախագծի իրականացումը:	
8	Առնչությունն այլ բնագավառների հետ: Որքանո՞վ է նախագծի իրականացումը նպաստում տվյալ կամ հարակից բնագավառների առաջընթացին:	
9	Կարևորություն: Որքանո՞վ է նախագիծը նորարարական իր արդյունքների հնարավոր կիրառություններով(գիտության հետագա զարգացում, տեխնոլոգիական արտադրանքների, համակարգերի և մեթոդների, ուսումնական գործընթացի բարելավում, զգալի տնտեսական կամ հասարակական ազդեցություն): (Լրամշակված՝ գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 20-ի նիստում):	
10	Միջազգային համագործակցություն: Որքանո՞վ է նախագծի իրականացումը նախատեսում միջազգային համագործակցություն (Լրամշակված՝ գիտական խորհրդի 2017 թ.-ի դեկտեմբերի 4-ի նիստում):	
11	Իրականացման մեթոդներ: Որքանո՞վ են նախագծում ներկայացված մեթոդները համապատասխանում հետազոտության նպատակների ձեռքբերմանը:	

12	Իրականացման փուլեր: Որքանո՞վ են համապատասխանում նախագծի իրականացման փուլերը հետազոտության նպատակներին հասնելուն:	
13	Իրականացման փուլերի վերահսկելիություն: Որքանո՞վ է իրատեսական նախագծի իրականացման փուլերի վերահսկելիությունը:	
14	Մարդկային ներուժ: Որքանո՞վ է համապատասխանում խմբի անդամների թվաքանակն ու մասնագիտական որակավորումը նախագծի իրականացմանը:	
15	Տեխնիկական ապահովվածություն: Որքանո՞վ են բավարար առկա և (կամ) ձեռքբերվելիք տեխնիկական միջոցները նախագծի իրականացման համար (Լրամշակված՝ գիտական խորհրդի 2017 թ.-ի դեկտեմբերի 4-ի նիստում):	
16	Արդյունքների տնօրինում: Որքա՞ն հստակ է ձևակերպված հետազոտության արդյունքների տնօրինումը. արդյունքների օգտագործում և տարածում (հրապարակումներ, գիտաժողովներ և այլն), նորարարական կարողության օգտագործում (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփական տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն):	
17	Նախահաշիվ: Որքանո՞վ է համապատասխանում պահանջվող ֆինանսավորման ծավալը և դրա բաշխումը ըստ հոդվածների՝ հետազոտության նպատակներին հասնելուն	
Փորձագետի ընդհանուր գնահատական		Մինչև 85 միավոր

Փորձագետի մեկնաբանություններ (ծավալը չի սահմանափակվում)

Հետազոտության նպատակների մեկնաբանություն (հարցաշարի 1-4 կետերը):
Նախագծի մեկնաբանություն (հարցաշարի 5-10 կետերը):
Նախագծի իրականացման մեկնաբանություն (հարցաշարի 11-17 կետերը):

ՇՊՀ-ի ներքուհական Խորհրդի գնահատական

1	Հետազոտության ղեկավարում: Որքանո՞վ է համապատասխանում ղեկավարի մասնագիտական որակավորումը նախագծի իրականացմանը:	
2	Իրականացնողների կազմ: Որքանո՞վ է համապատասխանում կատարողների/խորհրդատուի մասնագիտական որակավորումը նախագծի իրականացմանը:	
3	Ուսանողների ընդգրկվածություն: Որքանո՞վ է համապատասխանում խմբում ընդգրկված ուսանողի մասնագիտական ուղղվածությունը նախագծի իրականացմանը (Լրամշակված՝ գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 20-ի նիստում):	
Խորհրդի ընդհանուր գնահատական		Մինչև 15 միավոր